ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Նորապատ հեռ.(0237) 6-36-10

Թիվ 02 -- 95
04.09.2014թ

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ գյուղական համայնքի ավագանու 2014թվականի օգոստոսի 26-ի հերթական թիվ 8 նիստի որոշումը:

Առդիր 3 էջ

Նորապատ համայնքի ղեկավար՝ Ս.Բաղալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՆՈՐԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

գ.Նորապատ հեռ.(0237) 6-36-10

ՈՐՈՇՈՒՄ

26.օգոստոսի 2014 թվական

Թիվ 8 նիստի

N 1

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետով Նորապատ համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի օգոստոսի 26-ի հերթական թիվ 8 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

կողմ	կողմ
Ղազարյան Նորայր	Սիմոնյան Վահան
Հարությունյան Սեդա	Մխիթարյան Ռոբերտ
Նազարյան Էդգար	Առաքելյան Արտյոմ

Նորապատ համայնքի ղեկավար՝ Ս.Բաղալյան

2014 թվական օգոստոսի 26
գ.Նորապատ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Նորապատի
գյուղական համայնքի ավագանու
2014թվականի օգոստոսի 26-ի
թիվ 8 հերթական նիստի
N 1 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. Օրակարգի հաստատում

Ս.Բաղալյան /Համայնքի ղեկավար/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Նորապատի բժշկական ամբուլատորիա>> Փակ Բաժնետիրական Ընկերությունը <<Նորապատի Բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորելու մասին:

Ս.Բաղալյան /Համայնքի ղեկավար/

Աշխատակազմի քարտուղար Վ.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՆՈՐԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

26. օգոստոսի 2014 թվական

Թիվ 8 նիստի

N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ՆՈՐԱՊԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>>
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ <<ՆՈՐԱՊԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>>
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Քաղաքացիական օրենսգրքի>> 63-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայսատանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով `համայնքի ավագանին `

ՈՐՈՇՈՒՄ Է

1. <<Նորապատի բժշկական ամբուլատորիա>> Փակ Բաժնետիրական Ընկերությունը/այսուհետև՝ ՓԲԸ /վերակազմավորման ձևով վերակազմակերպել <<Նորապատի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ՀՈԱԿ/:
2. Համայնքի ղեկավարին՝
   1) Մեկամսյա ժամկետում կազմել և հաստատել ՓԲԸ վերակազմավորման կարգը ,պայմանները, տեղաբաշխված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի փոխարկման կարգը:
   2) Հաստատել ՓԲԸ գույքի և գույքային իրավունքների `ՀՈԱԿ-ին փոխանցման ակտը,որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ:
   3) Կայացնել ՀՈԱԿ-ի ստեղծման մասին որոշումը ,կազմել կազմակերպության կանոնադրության նախագիծը և ներկայացնել ավագանու հաստատմանը:
   4) Կազմել համայնքային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող `համայնքին պատկանող գույքի կազմը և ներկայացնել ավագանու հաստատմանը:
3. Կազմակերպության կառավարման ,ինչպես նաև՝ <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի <<է>> ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Նորապատ համայնքի ղեկավարին:
4. ՓԲԸ տնօրենին՝ ընկերության բոլոր պարտատերերին օրենքով սահմանված կարգով ծանուցել ընկերության վերակազմավորման մասին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

	կողմ		կողմ
Ղազարյան Նորայր		Սիմոնյան Վահան	
Հարությունյան Սեդա		Մխիթարյան Ռոբերտ	
Նազարյան Էդգար		Առաքելյան Արտյոմ	

Նորապատ համայնքի ղեկավար՝ Ս.Բաղալյան

2014 թվական օգոստոսի 26
գ.Նորապատ